Ասուլիսները հիմնականում այդպես ընկալվեցին նաև արևելահայ գրական միջավայրում: Պոլսի հայ մտավորականության նախաձեռնությամբ հետաքրքրվում է մասնավորապես Ն. Աղբալյանը: Դա պատահական չէր. ասուլիսների շարքն սկսվում է Շանթի «Հին աստվածների» քննությամբ՝ անմիջականորեն արձագանքելով դրամայի շուրջը արևելահայ քննադատության մեջ ծավալված խոսակցություններին, որոնց ամենագործուն մասնակիցն ինքը՝ Աղբալյանն էր:

Անվանի քննադատը «Նոր հոսանքում» և «Հորիզոնում» հանրությանն է ներկայացնում ասուլիսներից մի քանիսի բովանդակությունը: Որքան էլ քննադատն աշխատում է անկողմնակալ հայացքով հանդես գալ գրական այդ հավաքույթների, ընդհանրապես արևմտահայ գրական շարժման մասին, այնուամենայնիվ, չի թաքցնում իր տեսակետները որոշ սկզբունքային հարցերի վերաբերյալ: Աղբալյանը չի ընդունում Տ. Չյոկյուրյանի, Զ. Եսայանի և մի քանի ուրիշ բանախոսների քննադատության մեթոդն ու գեղագիտությունը: Նա հատկապես խիստ միակողմանի է համարում, երբ Զ. Եսայանը, Ռ. Զարդարյանի «Ցայգալույսի» մասին իր ելույթում «քննադատության մեջ մերժում է ամեն ուրիշ տեսակետ, բացի զուտ գեղագիտական նեղ մտքով ասած»: «Հին աստվածներին» և Գր. Զոհրապի նովելներին նվիրված ասուլիսների կապակցությամբ քննադատն ընդարձակում է այս միտքը՝ նշելով հայ քննադատության երկու հատվածների հակադրության մի նոր եզր. «Նրանք խորշում են սխեմաներից, մենք անհատական բնորոշումներից: Սովորաբար ամեն նոր գիրք նրանց համար մի անջատ երևույթ է, մեզ համար մի որոշ շարժման ցուցանիշ: Նրանք ավելի արվեստին, ձևին են կարևորություն տալիս, մենք բովանդակության»: Սա, Ն. Աղբալյանի համոզմամբ, նաև ասուլիսների հիմնական թերությունն է:

Մեր խնդրից դուրս է ցույց տալ, թե որտեղ է քննադատն իրավացի, որտեղ ոչ: Էականն այն է, որ նա սկզբունքորեն դնում է հայ քննադատության երկու ճյուղերի ներդաշնակ ամբողջության կարևոր հարցը. «Պետք է գտնել քննադատության այնպիսի մի ձև, ուր այդ երկու հակումները համադրվեին և կազմեին մի ներդաշնակ ամբողջություն»: քննադատի կարծիքով՝ ասուլիսներն այս տեսակետից քիչ նյութ կարող են տալ: Բայց ընդհանուր մշակութային առումով նա բավականին ճիշտ է գնահատում գրական-քննադատական այդ հավաքույթների նշանակությունն ու դերը.